



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lum
924

ՀԱՅԵՐ ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ



Կ. ԼՈՒԿՈՎԵԼԻՑ

ԱՂԲԱՏ

ԴՊՐՈՑԱԿԱՆ

2004

Թարգմ. ՕԲ. Մ. Ա.

Թիվ 1
Արագածոտն ՀՀ պետական
1912


ՀԱՅ

924

ար

ՆԱԽԵՐ ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻՆ

1120.



ԱՂՔԱՏ

ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

Թարգմ. ՕԲ. Ա. Ա.

171.



ԹԻՖԼԻՏ

Արագածոտիպ Շխազերանոց Ելիզաւետինսկայա № 17
1912

5808



924-2012
5040 | 38 | 924-2012
W8919



Կեսօր էր: Դպրոցի ընդարձակ բակում աշկերտները ձնագնտի էին խաղում: Զմեռուայ պարզ եցուրտ օր էր: Երեխաները ուրախ գուարիթ ձնակոլող էին անում իրար, գոտեմարտում, ծիծաղում, միմեանց վրայից թռչում: Նրանք թուով յիսուն հոգի էին՝ հասակով 8—15 տարեկան:

Փառան մորթէ մոխրագոյն գլխարկով 13 տարեկան մի տղայ, ամենից լաւ էր կարողանում ձնագնտով խփել ընկերներին: Նա թէև կափկան էր, բայց գէմքը ուրախ էր, աչքերը ծիծաղկոտ ու փայլուն. մոխրագոյն գլխարկը ծոծրակի վրայ քաշած՝ բաւականութիւնից և յաջողակութիւնից կարմրել էր: Ընկերներն էլ

Նրան գովարանում էին ասելով՝ «Կեցցէ քաջ ու
ճարպիկ Անտօնը, նրա ձեռից ոչոք չի պրծ-
նում, մի տեսէք ինչ անվրէալ աշք ունի»։

Իսկ Անտօնը, որ ճնազունուր ձեռին նայ-
ում էր դէս ու դէն թէ էլի ում խփէ, յան-
կարծ կանգ առաւ ու աղաղակեց.

—Տղէք, նայեցէք, երեկուայ տղան դար-
ձեալ եկել կանգնել է ցանկապատի ետեր։

—Երէկ նա մեզնից վախեցաւ ու վախաւ,
—ասաց աշակերտներից մէկը. —Եկէք մի լաւ վա-
խեցնենք, նա դարձեալ կրփախչի։

—Հարկաւոր չէ վախեցնել աւելի լաւ է
հարցնենք թէ ինչ է ուզում, ասաց մի խելա-
ցի ձայն։

—Եւ ինչու է նա շարունակ մեր դպրոցի
մօտերքը քարշ գալիս, ի՞նչ է ուզում, ինչու
ծածուկ դիտում է, նկատեցին միքանիսը։

Աշակերտներն ուրախ վաղեցին դէպի ցան-
կապատը։ Ցանկապատի մօտ կուչ եկած կանգ-
նած էր տղան։ Նա միջահասակ էր, նիհար և
գունատ. վերին աստիճանի աղքատիկ զգեստը
հազիւ էր ծածկում նրա ոսկրացած մարմինը։

Տղան դէպի իրեն վազող խումբը տեսնելով
յանկարծ ցնցուեց, ուզեց վախչել... բայց կար-
ծես ինչ-որ ոյժ նրան կանգնեցրեց. Նա պուխը
բարձրացրեց և սպասողական դիրք բռնեց։

—Ի՞նչ ես ուզում, ինչու ես թափառում մեր
դպրոցի մօտերքը. մուրացկան ես, ողորմու-
թիւն ես խնդրում, կարկափ պէս թափուեց ա-

շակերտների հարցերը. նրանցից մէկը հաց առաջարկեց խեղճ տղային, բայց նա չվերցրեց: Նրա դէմքը լուրջ էր և անվրդով, միայն նրա շրթունքները դողում էին ցրտից ու յուզմունքից:
—Այս դպրոց է, պատասխանի փոխարէն հարցը շրջմոլիկը:

—Ի հարկէ դպրոց է, միթէ չես տեսնում, նկատեց Անտօնը:

Դու կարդալ չգիտես ի՞նչ է: Չես տեսնում՝ դպրոցի ճակատին զրած է. «Զառւսեան քաղաքային դպրոց», Փափացներով խօսեց ամենից փոքր, հաստիկ և ծուռոտ տղան ցոյց տալով նշանատախտակը՝ կարծես իւր գիտութեամբ պարծենալով:

—Տղէք, ի՞նչպէս երևում է, այս թշուառականն անգրագէտ է, նա կարդալ չգիտէ, նկատեցին միքանի ձայներ և ծիծաղեցին:

—Կարո՞ղ ես ասել թէ ս և ա միասին ի՞նչ կը կարդացուի... երկի չգիտես, այն ի՞նչ թափառում ես դպրոցի մօտերքում:

—Թողէք, ի՞նչ էք կպել զրան, սաստեց նրանց Անտօնը:

Նա, ի՞նչպէս երևում էր, խմբի առաջնորդն էր. բոլոր աշակերտները յարգանքով էին վերաբերում նրան. շուտով ամենքը հանդարտուեցին:

—Լսիր, այ տղայ. ի՞նչու ես շարունակ թափառում մեր դպրոցի մօտերքը, գործնական կերպով հարցը ցը Անտօնը:

Պատասխան չեղաւ:

—Քեզ եմ հարցնում. այստեղ ի՞նչ ես շինում, կրկնեց Անտօնը ձայնը բարձրացնելով:

—Վարժուհուն եմ ուզում... ցածր ձայնով պատասխանեց տղան և աւելի կուշ եկաւ ու ծամածուեց դէմքը:

—Դու մեր վարժուհուն ես ուզում, օր. Մարիամին, ինչու համար:

—Տեսնում էք, հացը չի վերցնում, երկիրուկի է ուզում, ասաց մի սեաչեայ զուարժ տղայ:

—Ի՞նչ ես ուզում, ինչու ես այստեղ կանգնած, նորից հարցըին աշակերտները:

Պատասխան չկար:

Յայտնի չէ թէ ինչով կրվերջանար այս խօսակցութիւնը: Տղաները կարծես այնքան էլ լաւ չէին արամադրուած...

Սակայն այդ միջոցին դպրոցի շէմքին երեւաց մի կռնատ զինուոր և լսուեց բարձրաձայն զնդզնվացնող զանգի ձայն:

Երեխաները շտապով վազեցին դէպի դուռը՝ մէկ հրհրելով միմեանց, մէկ յետ նայելով մուրացկանին, ներս էին մտնում:

Մուրացկանն անշարժ կանգնած էր ցանկապատի մօտ դարձեալ մտախոհ:

Երեխաները մըրիկի պէս ներս ընկան և շրջապատեցին վարժուհուն: Օրիորդն արդէն նկատեց, որ նրանք մի բանով յուզուած են և

ուզում են ինչ-որ պատմել։ Շտավողական ձայների, միմևանց խօսքը կտրող աղմուկի մէջ օրիորդը հետեւալը միայն ըմբռնեց։ «Մուրացկան տղան թափառում է զպրոցի շուրջը... ձեզ է հարցնում, կանգնել է և գայլի նման նայում։ Կարդալ չգիտէ. հաց տուինք, չվերցրեց»։

— Սպասեցէք, երեխայք, բոլորդ միասին մի խօսէք։ Անտօն, մէկ կարգին պատմիր՝ ի՞նչ է պատահել։

— Այնտեղ ցանկապատի մօտ,— խօսեց Անտօնը յուզուելով և կարմրելով,— մի մուրացկան մեծ տղայ է կանգնած, նա ձեզ տեսնել է ուզում։

— Նա երէկ էլ էր եկել, չհամբերեց և ծըւծուաց մի բարակ ձայն։

— Երէկ չէ մէկ էլ օրն էլ էր եկել. նա կարդալ չգիտէ, ֆսֆսալով աւելացրեց ութ տարեկան ծուռոտ հաստիկ տղան։

— Քհը, զբագէտիս նայեցէք... գրած է սանօ, իսկ դու կարդում ես տանձ, ժպտալով խօսեց վարժուհին։

Երեխաներն ուրախ ծիծաղեցին։

Այդ միջոցին դասարանի դուռը բացուեց և ամենքի համար անսպասելի երևաց այն թըշուառ տղան։

— Ահա նա, ահա նա, ուրախ-ուրախ ձայն տուին աշակերտները։

Վարժուհին արագ մօտեցաւ մտնողին։

— Ի՞նչ ես ուզում, սիրելիս, ողորմութիւն
ես հաւաքում։

— Ես ուզում եմ սովորել... պատասխանեց
տղան և զլխով ինչ-որ խիստ շարժում անելով՝
քիթը սրբեց թեքով։

Աշակերտները ծիծաղեցին։

— Ի՞նչպէս թէ սովորել. դու ով ես, որտե-
ղից ես, հարցրեց վարժուհին։

— Գիւղիցն եմ, կարճ պատասխանեց տղան
և հիմա էլ միւս թեքով սրբեց քիթը։

Աշակերտները ծիծաղեց թուլանում էին։

— Ո՞ր գիւղիցն ես, հարցրեց վարժուհին։

Պատասխան չեղաւ։

— Քեզ ով ուղարկեց մեզ մօտ։

— Ոչոք։

— Ի՞նչպէս թէ ոչոք. երեկ մէկը սովորեց-
րեց քեզ, որ զայ այստեղ։

— Ո՛չ, ես ինքս։

— Դէհ, սիրելիս, հիմա ժամանակ չունեմ
քեզ հետ խօսելու։ Գնա խոհանոց այնտեղ սպա-
սիր, զասերից յետոյ կըտեսնեմ՝ ինչ ես ուզում։
Գնա, տաքացիր. գուցէ ուտել ես ուզում։

— Ուզում եմ, կարճ պատասխանեց տղան։

— Խսկ մեզնից չուզեց հաց վերցնել, նկա-
տեց երեխաներից մէկը։

— Գնա խոհանոց, այնտեղ մեր ծառայ Գէ-
որզը քեզ կըկերակրէ, և վարժուհին ցոյց տուեց
նախասենեակում եղած խոհանոցի դուռը։

Այս դէպքը շատ յուզեց աշակերտներին։

Նրանք անուշագիր էին պարապում. շարունակ դուրս էին վազում դասարանից, իսկ նախասեռնեակից վերադառնալով փսփում էին միմեանց հետ. Հենց որ դասը վերջացաւ, բոլորն էլ խոհանոց վագեցին. փոքրիկ մուրացկանը՝ մի նոր, դպրոցական կեանքի մէջ գեռ ևս չեղած՝ հետաքրքրութիւն էր բերել իւր հետ:

Նա խոհանոցում նստած խստագէմ ու տը-խուր աչքը յառել էր մի կէտի վրայ. Նրա խիտ խարտեաշ զանգուրները անկարգ թափուած էին ճակատի վրայ, խոշոր մոխրազոյն աչքերը տը-խուր ու մտածկոտ՝ մի տեսակ վշտալից արտայայտութիւն ունէին: Ճակատին նկատելի էր ոչ մաննկական խոր կնճիռներ, դէմքը կեղտոտ էր ու խղճալի:

Վարժուհին նոյնպէս մտաւ խոհանոց: Երե-խաները միմեանց հրհրելով և աղմկելով գուան մօտ հաւաքուեցին: Երբ օրիորդը մտաւ, տղան վեր չկացաւ, այլ մի տեսակ կուչ եկաւ նստած տեղը:

—Վեր կաց, վեր կաց, այ գու անկիրթ, խօսեց զինուոր-ծառան, որ վառարանի մօտ ինչոր բանի էր:

—Վնաս չունի, թնդ նստած մնայ, նա դեռ ևս չգիտէ մեր կարգերը, մեծահոգութեամբ խօսեց վարժուհին և մօտենալով տղային հարցրեց.

—Դէհ, հիմա ասա տեսնեմ, ո՞ր գիւղիցն ես:

Պատասխան չկար:

—Ինչու չես խօսում, դու քաղաքացի՞ ես:

—Ոչ:

—Ապա նրտեղ ես ապրում:
 Դարձեալ լոռվթիւն:
 —Դու ողորմութիւն ես խնդրում:
 —Ո՞չ, ոչ, վախեցած պատասխանեց տղան:
 —Ինչու այդպէս վատ ես հագնուած:
 —Հնաց այնպէս:
 —Գիտե՞ս, սիրելիս, այդպէս կեղտոտ չի
 կարելի դպրոց գալ: Երեմն ու ձեռները մաքուր
 պէտք է պահել, շապիկն էլ մաքուր պէտք է
 լինի:
 —Ես շատ, շատ եմ ուզում սովորել, խօ-
 սեց տղան և վարժուհուն նայեց այնպիսի մի ա-
 ղերսական հայեացքով, որ նա խղճաց ու ասաց.
 —Այդ լաւ է, սիրելիս, որ ուզում ես սովո-
 րել: Սակայն ես պէտք է իմանամ, թէ դու ով
 ես, որտեղից ես, ինչ ես անում: Անունդ ի՞նչ է:
 —Պետրոս:
 —Իսկ հայրանունդ:
 Տղան ճակատը կնճռեց և չպատասխանեց:
 —Հօրդ անունն ի՞նչ է:
 —Ես հայր չունեմ:
 —Բայց ունեցել ես, ի՞նչպէս էր նրա ա-
 նունը:
 —Յովիաննէս Վարաբեան:
 —Տեսնում ես, կընշանակէ դու Պետրոս Յովի-
 աննիսեան Վարաբեան ես:
 Աշակերտներից միքանիսը փրթկացին և
 սկսեցին կամաց շշնջալ.
 «Վահ, ի՞նչ մեծ մարդ է եղել—Պետրոս

Յովհաննիսեան Վարաբեան... Պետրոս Յովհաննիսեան, յարգանքներս»:

—Երեխայք, զնացէք տուն, — բարկացաւ վարժուհին. — Ի՞նչ էք ծիծաղում և աղմուկ անում: Ծիծաղելու բան չկայ: Խեղճութեան ու տգիտութեան վրայ չի կարելի ծիծաղել:

Աշակերտները փոքր ինչ շարժուեցին, իբրև թէ զնալու համար, բայց հէնց որ վարժուհին շարունակեց իւր խօսակցութիւնը, նրանք էլ ոտի թաթերով եկան իրենց տեղերը բռնեցին. նրանք շատ էին հետաքրքրուում թէ այդ բոլորը ինչով պիտի վերջանայ:

—Ասա, տեսնեմ, որ գիւղիցն ես:

Տղան յօնքերը կիտեց առանց ձայն հանելու:

—Եթէ չպատասխանես, ես չեմ կարող քեզ իմ գալրոցում ընդունել. լուրջ ասաց վարժուհին:

Տղան ճակատը կնճուց, մտածմունքի մէջ ընկաւ, յետոյ յանկարծ պատասխանեց.

—Վարոնիխա գիւղիցն եմ:

Այնուհետև նորից աղերսական հայեացք ձգեց օրիորդի վրայ ու խօսեց.

—Ընդունիր ինձ քո ուսումնարանում, ես շատ կաշխատեմ:

Վարժուհին տղայի խնդրի և աղերսական հայեացքի մէջ կարդաց իսկապէս ինչ-որ թախանձական, իսկ նրա արտաքինից հասկացաւ խեղճութեան և թշուառութեան տխուր պատմութիւնը:

—Լաւ, սիրելիս, վաղը առաւօտեան ժամը

Զ-ին կրգաս ուսումնարան։ իսկ այնուհետև կը-
տեսնենք։ Միայն թէ աւելի մաքուր պէտք է
հազնուես... Ա՛խ, երեխայք, դուք զեռ այստեղ
էք։ Ինչի՞ էք սպասում, զնացէք տուն։ Դու էլ
վնա, Պետրոս Վարաբեան։

Պետրոսի տխուր դէմքի վրայ ասես արեի
ճառագայթներ անցան, նա ամբողջովին կեր-
պարանափոխուեց, աշխուժութիւն եկաւ վրան։
Նա արագ վեր կացաւ և առանց շնորհակալու-
թիւն յայտնելու կամ ցտեսութիւն ասելու
դուրս եկաւ դպրոցից։ Աշակերտները նրա ետե-
փց ընկան և շրջապատեցին։


Իսկ վարժուհին տխրադէմ ետևից նայելով
մտածում էր. «Խեղճ տղայ, և ինչպէս փափա-
պում է սովորել»։

—Երեխայք, թողէք դրան հանգիստ, ձայնեց
նա աշակերտներին։

Երեխաները յետ կացան. Պետրոսը խոժո-
ռադէմ, սակայն աշխոյժ առաջ զնաց։ Աշակերտ-
ներից միքանիսը տեսան, թէ ինչպէս նա քա-
ղաքից դուրս գալով՝ զնաց ընդարձակ գաշտի
միջով. իսկ հեռուում երևում էր անտառը։

—Երեկի նա իսկապէս մի որևէ զիւղում է
ապրում,—ասաց Անտօնը իւր ընկերներին. —որ-
քան բարի է մեր վարժուհին, նա այն տղային
ասաց, որ գայ մեզ մօտ սովորելու։





¶

Յոր էր լուսանում։ Չառասական, գաւառական փոքրիկ քաղաքը նոր էր սկսել զարթնել առաւօտուայ քնից։ Միքանի տներում դեռ վառւում էին ճրագները, որոնք հետզհետէ լոյսը բացուելու հետ հանգչում էին։ Նեղ ու ծուռ փողոցները դատարկ էին և լուսվիւն էր տիրում։ Երբեմն անցնում էր ջրկիրը, տակառակիր սայլակով, որ գնում էր ջուր բերելու, երբեմն էլ մի-մի մարդ էր անցնում և զարձեալ ամեն բան հանգաբռտում։ Քամոտ և սառնամանիք առաւօտ էր։ Ուզեփակի կողմից փողոցով մի տղայ էր գալիս։ Նա կուչ էր եկել իւր կարճ պատառոտած վերարկուի մէջ։ Սառած ձիւնը ճրճում էր նրա ուսների տակը։ Երբ տղան մօտեցաւ միյարկանի մաքուր շինութեան, որի վրայ գրած էր «Չառսեան քաղաքային դպրոց», արդէն լուսացաւ։ Տղան սկսեց նայել ցանկապատի արանքից։

Դա երեկուայ տղան էր—Պետրոս Վարաբեանը: Ինչպէս երեսում էր նա մի բանի էր սպասում դռան մօտ: Ահա դպրոցի դուռը բացուեց. դուրս եկաւ կոնատ ծառան և տակառակիր սայլակին ձի լծելով՝ գնաց ջուր բերելու: Դռան մօտ Պետրոսին տեսնելով զարմացած ասաց:

—Չըինի՞ թէ սա երեկուայ տղան է... ինչու ես այսպէս վաղ եկել: Գնա տուն. մեզ մօտ ուսումը սկսում է ժամը 9-ին, իսկ հիմա միայն վեցն է: Գնա, գնա, այստեղ չի կարելի կանգնել կըսառչես, այ յիմար:

Տղան հնագանդուեց, փոքր ինչ հեռացաւ: Բայց մի ժամից յետոյ, երբ ծառան վերադարձաւ, տեսաւ որ Պետրոսը դարձեալ դռան մօտ է կանգնած:

—Ի՞նչ ձանձրալի տղայ ես. ի՞նչ ես այդ տեղին կպել, զոռաց ծառան:

—Կարելի է ժամանակ է սովորելու:

—Ես քեզ ցոյց կըտամ «սովորել»... Լուսադէմին եկել, այստեղ թափառում ես... Գնա ձեր տուն, ի՞նչ ես այստեղ սառչում... Հիմա միայն ժամը եօթն է. ես ութից առաջ դպրոցի դուռը չեմ բաց անում: Գնա, գնա, թէ չէ... Ի՞նչ արխմարն է:

Պետրոսը մի փոքր հեռացաւ. բայց հէնց որ ծառան դատարկեց իւր բերած տակառը ջուրը դոյլերով ներս կրելով և դուռը կողպեց, տղան յետ դարձաւ, նորից սկսեց դպրոցի շուրջը թա-



Ինչպէս երեսում էր նա մի քանի էր սպա-
սում՝ դռան մօտ:

փառել՝ աչքը չհեռացնելով դռնից։ Վերջապէս դուռը բացուեց և Պետրոսն խակոյն դռան առաջ բռւսաւ։

— Դու դաշճեալ այստեղ ես։ Ո՞հ, ինչ անհասկացով, քո ասածի տղայ ես, խօսեց զարմացած ծառան։ Սկզբում նա ուզեց յանդիմանել և դուրս անել այդ ձանձրացնող տղային, բայց տեսնելով նրա վրայի ցնցոտիները՝ կակղեց։

— Տեսնում ես, այտերդ ինչպէս սպիտակել են, երեկի սառցը ել ես. արի ձիւն քսեմ։

Մինչդեռ Գէորգը ձիւնով շվում էր նոր աշակերտի քիթն ու այտերը, նա իսկի չէր ընդդիմանում, միայն կնճռում էր, հառաջում և բան չէր ասում։

— Հիմա գնա խոհանոց տաքացիր։ Ա՛խր, ինչն այսքան վաղ ես եկել և այստեղ քարշ գալիս։ Զգեստդ էլ բոլորովին անպէտք է... Ի՞նչպէս են դուրս թողնում քեզ ձեր տանըցիք։

Տղան լուռ քայլեց, մտաւ խոհանոց։ Նա կապուտկած էր և ցրտից դողում էր։

— Աստուած գիտէ, թէ ով ես դու... Քեզնից բան չի կարելի հասկանալ... Ով գիտէ ինչ գտնն է վիճակդ և որքան մեծ է ուսման փափազդ։ Տես, ցրտատար ես եղել։ Տաքացիր. քեզ մի բաժակ թէյ լցնեմ, խմիր։

Տղան լուռ էր. միայն ձեռներով սեղմում էր քիթն ու այտերը, որոնք կարմրել և ուռել էին։

Երբ աշակերտները հաւաքուեցին դպրո-

ցում և Պետրոսն էլ եկաւ նրանց մօտ, ամենքն էլ սկսեցին անգուսպ ծիծաղել նրա վրայ։ Նորեկը տանը գործած կտորից կապոյտ շապիկ ունէր հազին, մէջքին մի մեծ կարկատան գըցած, ոտերին տրեխներ, քիթ ու պունդն ուռած, գանգուր մազերը գզզած, ձեռները կեղտոտ ու կոշտ։

—Տղեք, նա անշուշտ կալանաւոր կրլինի։ Նայեցէք՝ մէջքին մէկանոց (տուզ) կայ, ձայն տուաւ Պապովեանը և նորեկի մէջքին խփեց։

—Ի՞նչ ես անում, այ դու դե, չէ՞ որ ցաւում է, բարկացաւ նորեկը։

—Իսկ դու մի հայհոյիր, դդմամ... թէ չէ վարժուհին քեզ կըպատժէ... մեզ մօտ հայհոյելլ սաստիկ արգելուած է։

—Տղեք, նրա քիթը կարծես ճակնդեղ լինի։

—Իսկ այտերը՝ կովակաղամբ։

—Իսկ ինքը ասես թէ՝ բանջարանոցի խըրտուիլակ։

Եւ այդ նկատողութիւններին ամեն անգամ հետևում էր երեխաների բարձրածայն հրհուցը։

Պետրոսը մուայլ ու վայրենի հայեցքով նայում էր կուտասէր փոքրիկների ամբոխին. կարծես ուզում էր յարձակուել նրանց վրայ և պատառ-պատառ անել բոլորին։

Սյդ միջոցին վարժուհին դուրս եկաւ կից սենեակից։ Նա շուարուած մնաց կանգնած. նրա աչքի առաջ եղած պատկերը թէ ծիծաղելի էր և թէ խղճալի. պատառուտած զգեստով, կեղտոտ,



(5040 / 38 / 924-Ժ012)

ցըտից ուռած ու կապուտկած դէմքով խեղճ
տղան սպառնալի ու պաշտպանողական դիրք էր
բռնել. իսկ նրա առաջ կանգնած էր կարծես ի-
րօք յարձակուող կռուասէր տղաների ուրախ
ամքոխը...

—Երեխայք, այս ի՞նչ է նշանակում։ Գնա-
ցէք ձեր տեղերը՝ ի՞նչու էք ծաղրում նորեկին.
այդ լաւ չէ, ամօթ չ։

—Մենք չենք ծաղրում...

—Այդ ես չէի...

—Ո՞չ էլ ես...

—Պապովեանն էր, լսուեց մի բարակ ձայն
և առաջին նստարանից վեր կացաւ սիրունիկ
ու թիւիկ դէմքով մի փոքրիկ տղայ։

—Ե՛յ, լոիր. մատնութիւններ է անում, իսկ
ինքը գետնի վրայ հազիւ է երևում, —ետեւ նըս-
տարանից նկատեց մի ուրիշը։ —Դու չէիր որ ա-
սացիր, թէ նա բանջարանոցի խրտուիլակ է։

—Այդ ես ձեզնից յետոյ ասացի. առաջ
դուք սկսեցիք։

—Այ դու՝ անպիտան մատնիչ, լսուեցին
միքանի անբաւական ձայներ։

—Երեխայք, լսեցէք, թողէք ձեր վիճարանու-
թիւնները. այլ ևս ոչ մի ձայն, խստութեամք
նկատեց վարժուհին։

Դասարանում լուսթիւն տիրեց։

—Անդրիաս, աղօթքն ասա։

Առաւօտեան աղօթքից յետոյ երեխաները
խմբովին երգեցին «Հայր մեր»-ը։ Պետրոսը աշ-

քերը չուած և բերանը բաց անշարժ կանգնած էր։ Ամենքն արդէն նստել էին. խսկ նա կարծես մի լաւ բանի ականջ դնելիս փէտացել էր կանգնած տեղում։ Վարժուհին նայեց նրան ուժպաց։

— Պետրոս Վարաքեան, վնա խոհանոց, լաւ լուացուիր ու սանդրուիր. մաքուր պէտք է գալ ուսումնարան։

Դասը սկսուեց։ Աշակերտները գրում էին, կարդում և ուսանաւորներ ասում։ Նորեկը իրեն մի կերպ կարգի բերած՝ նստեց միւսների կողքին։

Ցըտից սառած, կարմրած և ուռած այտերով ու քթով նա թէ ծիծաղելի էր և թէ խղճալի։

Վարժուհին տուեց նրան զիրք, տետրակ և մատիտ։ Պետրոսն այդ բոլորն ընդունելով՝ ուրախութիւնից փայլեց։ Նա սեղմեց նրանց իւր կրծքին և շտապով հարցրեց.

— Այս բոլորը ի՞նձ։

— Այն, քեզ, պատասխանեց վարժուհին։

— Գիրքն է՛ւ, բոլորովին ի՞մս է... կարող եմ և տնին տանել։

— Ի հարկէ, եթէ այդքան ուզում ես սովորել, զիրքն էլ, տետրակն էլ, մատիտն էլ կարող ես տուն տանել. բայց աշխատիր, որ մաքուր պահես։

Տղան նստեց, զիրքը սեղմեց իւր կրծքին և ժպտաց ինչ-որ տարօրինակ երջանիկ ժպիտով։

Աշակերտները միմեանց էին նայում և քը-
թերի տակ ծիծաղում։

Երևաց որ Պետրոսն արդէն շատ բան գի-
տէ. նա գիտէր բոլոր աղօթքները, ամբողջ այ-
բուբէնը, նոյն իսկ կարդալ ևս գիտէր։

Բայց և այնպէս միքանի տառեր միմեանց
հետ շփոթում էր. օրինակ՝ զի տեղը ու էր ա-
սում, ու ի տեղը ու, այդ պատճառով շատ ծի-
ծաղելի խօսքեր էր ստացւում, որի վրայ ինքն
էլ էր զարմանում։

—Ո՞վ սովորեցրեց քեզ, հարցրեց վարժուհին։

—Ոչոք... ինքս... լսել եմ։

Պետրոսը գիտէր և զրել միայն թէ տպած
տառերով. ուրեմն նրա բոլոր իմացածը կիսատ
էր և խառը։



Երբ վարժուհին նրան տետրակ տուեց և
հրամայեց զրել արմատական զծերը, նա այն-
պէս կպաւ տետրակին և աշխատում էր լսու
զրել որ պուխը թեքել էր մի կողմ և ճակա-
տին քրտինք էր երևում։

Ժամը 12-ին ծառան զանգը տուեց։ Վարժուհին մտաւ իւր սենեակը նախաճաշելու։ Երեխաներն էլ հանեցին իրենց հետ բերած պաշարը և սկսեցին ուտել։ Պետրոսը պուփը չէր հեռացնում իւր տետրակից և անվերջ զրում էր ու գրում։

— Ե՛, նորեկ, վերջացրու զրելդ, հիմա դասամիջոց է, ասաց փոքրիկ Սիմէօնը։

— Հացդ հանիր ու կեր, խորհուրդ տուեց Անտօնը։

— Այս ըոպէին զբօնելու կերթանք, իսկ դասարանի օդը պէտք է մաքրեն, նկատեց Պապովեանը։

Պետրոսը ոչ մէկին չպատասխանեց, նա շարունակեց զրել. կարծես ընկերները նրա հետ չէին խօսում։

— Տղէք, նա համը է, ասաց Պապովեանը։

— Ո՞չ, նա խուլ է, ընդդիմախօսեց մի ուրիշը։

— Եյ, գնաւ, բաւական է զրելդ, բղաւեց փոքրիկ Սիմէօնը և բոթեց Պետրոսին։

— Թողղի ինձ, անասուն, տառս Փչացրի։

— Զհամարձակուես հայիոյել, զգնում, ես կասեմ օրիորդին, նա քեզ կըպատժէ։

— Նա ուղղակի խելառ է։ Եյ, գնաւ, Պետրոս Վարաբեան, ինչո՞ւ չես պատասխանում։ Քեզ հարցնում են՝ ինչո՞ւ չես ուտում, հարցրեց Անտօնը։

— Ես բան չունեմ ուտելու, պատասխանեց տղան իւր տիսուր հայեացքը ձգելով իրեն հարց տուողի վրայ։

Անտօնը մի տեսակ շշմեց, նա իրեն անյար-
մար զբութեան մէջ զգաց այդ պատասխանից
և իւր յուզմունքը ծածկելու համար բարձրա-
ձայն դիմեց ընկերներին.

—Դէ՞ս, տղէք, էլ ինչի՞ ենք սպասում, զբ-
նանք բակը ձնագնտի խաղալու:

Ուրախ խումբը վագեց իւր առաջնորդի ե-
տելից:

Ծառան էլ թոյլ չտուեց Պետրոսին, որ զա-
սարանում մնար և նա ստիպուած եղաւ խոհա-
նոցում շարունակել իւր զբութիւնը:

Վարժուհին հետաքրքրուում էր նորեկով և
գնաց տեսնելու, թէ նա ինչ է անում:

—Դու բան կերպը, հարցըց նա:

—Ո՛չ, պատասխանեց տղան:

—Ինչու, հաց չէի՞ր բերել:

—Ո՛չ:

—Դու ծնողներ ունե՞ս:

—Ունեմ:


—Այ տարօրինակ տղայ: Ուզո՞ւմ ես ուտել:


—Ուզում եմ:

—Գէորգ, սրան ուտելու բան տուէք, —դի-
մեց ծառային և յետոյ աւելացրեց. — զասերից
յետոյ քեզ կրտանեմ բարեկամուհուս մօտ, նա
բժշկի օգնական է, քեզ կընայէ, ցրտահարու-
թեան դէմ քսելու դեղ կրտայ: Իսկ դու, սիրե-
լիս, աւելի մաքուր հագնուիր, այսօրուայ պէս
վաղ մի գար և հաց բեր հետդ. կարող ես:

—Կարող եմ, պատասխանեց տղան:

— Իսկ մաքուր շապիկ ունե՞ս:
 — Ունեմ, մի տեսակ կուչ գալով պատաս-
 խանեց նորեկը և շփոթուեց:
 — Ասա մայրիկիդ, կամ ով որ ունես քեզա-
 նից մեծ, որ գայ ինձ մօտ:
 — Մայրիկս հիւանդ է, վախեցած պատաս-
 խանեց տղան:
 — Դէհ, ոչինչ, երբ կըլաւանայ, կըգայ և
 քեղ էլ լսւ կըպահէ:
 Նորեկի ցնցոտիները, նրա կցկտուր պա-
 տասխանները պարզ ցոյց էին տալիս նրա ընտա-
 նեկան դառը վիճակը, և վարժուհու կարեկցող
 սիրտը տղայի տիսուր ու աղերական հայեաց-
 ըի մէջ կարդաց ինչ-որ տիսուր պատմութիւն.





¶

Արագ անցնում էր ժամանակը։ Վարժուհին հիացած էր իւր նոր աշակերտի ընդունակութեամբ։ Պետրոսը երբէք չէր խաղում, այլ շարունակ պարապում էր՝ զրում, կարդում կամ թուաբանական վարժութիւններ էր անում։ Եթէ դպրոցի ծառան, Պէորդը ստիպում էր նրան դասամիջոցին խաղալ, նա զիրքը վերցնում և բակի մի կողմը առանձնանալով՝ նորից սկսում էր եռանդով կարդալ։

Պետրոսն ամենից առաջ էր գալիս ուսումնաբան։

Պէորդը ինչ ժամանակ էլ բաց անէր դպրոցի գուռը, Պետրոս Վարաբեանն արգէն կանգնած էր լինում շէմքին և շտապում էր ներս ընկնել այդ լուսոյ և գիտութեան տաք ապաստարանը։ Ընկերները թէև հաշտուեցին նրա հետ, բայց նրան չէին սիրում իւր տխուր և լուռ ընաւորութեան համար։ Նրանց դուք չէր գա-

լիս, որ նորեկը երբեմն թուղթ, երբեմն անպէտք տետրակ էր խնդրում իրանցից:

Մի անգամ նոյն իսկ կարկանդակ ուզեց նրանցից, բայց ստանալով այն, ինքը չկերաւ, այլ ծոցում պահեց:

—Տղէք, զա կարծես մուրացկան լինի, ամեն բանի համար էլ ձեռք է մեկնում... Ամեն բան նրան տնտը հա տուր, ասաց Գրիգորը, որ մի ժամ ու խոհուն տղայ էր:

—Պետրոս, մուրացկանութիւն մի անիր, թէ չէ օրիորդին կասենք, նա քեզ կըպատժէ:

Պետրոսը կարծես ամաչեց և վախեցած թարթեց աչքերը:

Վարժուհին շատ էր ուրախանում Պետրոսի ընդունակութեան վրայ, սակայն նրան յուսահատեցնում էր տղայի անմաքրասիրութիւնը, զգզուած մազերը և մէջքին ահագին կարկատան զցած շապիկը:

—Պետրոս, միթէ դու մաքուր շապիկ չունես, հարցը օրիորդը:

—Սա մաքուր է, տիուր պատասխանեց տղան:

—Ամենակին մաքուր չէ, տես որքան ծակեր կան, օճիքդ էլ պատուած է:

—Երէկ էլուացած, աւելի լուրջ պատասխանեց տղան:

—Կարելի է լուացած է, բայց վատ է լուացած. մինչև անգամ կեղտի հոտ է գալիս դրա-

նից... Զերոնց ասա, որ մի ուրիշ շապիկ տան
քեզ, դրանով չի կարելի դպրոց գալ:

Միւս օրը Պետրոսը կարմիր մաքուր շապ-
կով եկաւ դպրոց. ստկայն վրան կարճ էր ու
նեղ, թևերն էլ շատ կարճ էին, համարեա մին-
չև արմունկները:

— Տղէք, մէկ նայեցէք մեր Պետրոսին, թէ
ինչպէս է զարդարուել, նկատեց Պապովեանը:

— Վայ, ինչ նեղ է, իսկ թևերը մինչև ար-
մունկներն են համում, աւելացրեց փոքրիկ Մի-
մէօնը:

Պետրոսը լուռ էր, կարծես չէր լսում:

Անցել էր միքանի շաբաթ: Վարժուհին շա-
րունակ գովում էր իւր նոր աշակերտին և
միւնքին էլ յորդորում, որ նրանից օրինակ
առնեն. այդ իսկ պատճառով ընկերները չէին
սիրում Պետրոսին և գաղտնի գանազան վիրա-
ւորական անուններ էին տալիս նրան. օրինակ՝
ծանրաշարժ, մուրացկան և այլն:

Վարժուհին հիացած խօսում էր իւր ընկե-
րուհի օր. Հեղինէի հետ:

— Զարմանալի ընդունակ է այս տղան. ա-
մեն բան հեշտութեամբ ըմբռնում է, ամեն բան
յիշում է. մի անգամ ասածը էլ հարկաւոր չէ
երկրորդ անգամ կրկնել: Ստկայն նա շատ է
նիհարւում, միշտ լուռ է և տխուր: Երեխանե-
րը նրան չեն սիրում:

Օր. Հեղինէն քննելով Պետրոսին, գտաւ, որ
նա շափազանց յոզնած է, ուժասպառ և շատ

պարապելը նրան աւելի վսաս կըտայ, մանաւանդ որ իրենց գիւղից մինչև դպրոցը մօտ հինգ վերստ կըլինի:

—Դու մի առժամանակ դպրոց չպիտի գաս, Պետրոս, ապա թէ ոչ կըհիւանդանաս, խորհուրդ տուեց վարժուհին:

Պետրոսը դադարեց դպրոց յաճախելուց. վարժուհին էլ կարծում էր, թէ նա տանը հանգստանում է:

Մի անգամ օրիորդը նկատեց, որ երեխաները ինչ-որ ծածուկ քչիչում են, ու հարցը եց.

—Այդ ի՞նչ նորութիւն գիտէք:

Երեխաները իրար նայեցին ու կարմրեցին:

—Ասացէք՝ ի՞նչ է պատահել, նորից հարցը եց վարժուհին:

—Վասիլին երէկ տեսել է Պետրոսին... լըսուեց մէկի ձայն:

—Ի՞նչ կայ որ, նրանդ տեսար, Վասիլ:

—Հեռու... Այստեղից 15 վերստ հեռու... նա ողորմութիւն էր ինզըռում:

—Այդ անկարելի է, երկի ուրիշին ես տեսել:

—Ես նրան լաւ ճանաչեցի, նա հէնց որ ինձ տեսաւ, թագնուեց ու փախաւ:

—Դատարկ բաներ ես խօսում, նկատեց օրիորդը, ես այդ կըստուգեմ. աշակերտը չի կարող մուրացկանութիւն անել: Այդ ամօթ բան է:

Այս խօսակցութիւնից երրորդ օրը, Պետրոսը, ինչպէս միշտ, շատ վաղ եկաւ դպրոց, տետրակի կէսը գրած, գրքի կէսը կարդացած:

—Ո՞րտեղ էիր կորել, Պետրոս, հարցը եց օ-
րիորդը:

Պատասխան չեղաւ:

—Պետրոս, ուղիղն ասա, ճիշտ է, որ դումու-
րացկանութիւն էիր անում:

Տղան ցնցուեց կարմրեց և կցկտուր ձայ-
նով պատասխանեց.

—Ո՞չ, սխալ է:

—Մի ստիր, ես քեզ տեսայ գիւղի մօտ,
պարկը ուսիդ զցած վնում էիր, ասաց Վասիլը:

—Սուտ ես ասում, խօսքը կտրեց Պետրոսը:

—Ո՞չ, սուտ չեմ ասում. ես տեսայ, որ դու
փախար:

Վարժուհին հրամայեց բոլորին լոել և խըս-
տութեամբ աւելացրեց.

—Աշակերտին անվայել է մուրացկանու-
թիւն անել, ձեզնից ոչ մէկը չպիտի անէ, և ձեր
ծնողները պէտք է թոյլ չտան: Այդպէս էլ ա-
սացէք. կամ մուրացկանութիւն անել կամ ու-
սում առնել, երկուսից մէկը:

—Մենք աղքատ չենք, մենք մուրացկանու-
թիւն չենք անում. Պետրոսն է աղքատ, լուե-
ցին շիոթուած ձայները:

—Բաւական է, երեխայք, իրար մինախա-
տէք, այլ ամեն մէկդ լաւ միտներդ պահեցէք,
ինչ որ ձեզ ասացի:

Մի երկու օրից յետոյ Պետրոսը դարձեալ
չեկաւ դպրոց և այսպէս յաճախ էր պատահում՝
մէկ օր գալիս էր, միւս օրը բացակայում:

Վարժուհին նոյն իսկ չեր հարցնում պատճառը, բայց սրտանց խղճում էր նրան:

Այդ միջոցին գասարանում մի չարաբախտ դէպք պատահեց, որից թշուառ տղան տւելի ևս կասկածի տակ ընկաւ: Աշակերտ Պապովեանը մի գրքոյկ կորցրեց, որը տեսել էր Պետրոսի ձեռին:

—Երկի նա իւր հետ տարաւ, իսկ հայրս ինձ վրայ կըքարկանայ, լաց էր լինում տղան:

Միւս օրը, երբ Պետրոսն եկաւ, ամենքը նրա վրայ ընկան: Իսկ նա ծոցից հանգիստ հանեց զրքոյկը և տուեց տիրոջը:

—Նա գողացել է... գու գող ես... գու իրաւունք չունէիր վերցնելու...

—Ես չեմ գողացել վերցրի կարգալու և ահա վերադարձնում եմ:

—Առանց հարցնելու ոչինչ չպէտք է վերցնես, նկատեց օրիորդը:

Միքանի օրից յետոյ, մի աշակերտ բուլկի կորցրեց, ծառան գրչահատ կորցրեց, և ամենքն էլ Պետրոսին կասկածեցին. իսկ նա դարձեալ կորաւ, երեք օր չեր գալիս դպրոց:

Երբ մի երեկոյ բժշկի օգնական օր. Հեղինէն եկաւ հեռու գիւղից և ասաց, որ Պետրոսին տեսել է մի փոքր տղայի հետ ողորմութիւն խնդրելիս՝ այլ ևս կասկած չմնաց: Այդ լուրը սաստիկ անախորժ թուաց վարժուհուն:

—Ծղան այնքան ընդունակ, աշխատասէր է, բայց երկի փշացած, գող և ստախօս, փոք-

ըութիւնից մուրացկանութեան սովոր, ողբում
էր վարժուհին:

Երբ Պետրոսը նորից եկաւ դպրոց, այդ օ-
րը օրհասական օր էր նրա համար:

Վարժուհին սկսեց նրան նախատել մու-
րացկանութեան, խաբերայութեան և գողու-
թեան համար: Իսկ երբ Պետրոսը սարսափած
սկսեց ուրանալ այդ բոլորը, վարժուհին սաս-
տիկ բարկացաւ նրա վրայ ասելով՝

—Քեզ այլ ևս չեմ հաւատում... դու ստա-
խօս ես և խաբերայ... ձիշտ է, դու ընդունակ և
աշխատասէր էիր, բայց և այնպէս վատ տղայ
ես եղել...

Վարժուհին դեռ չվերջացրած՝ յանկարծ
դասարանի գուռը բացուեց և մի գեղջկուհի
ներս ընկաւ գոռալով՝

—Այն, հէնց այդպէս է... հէնց դա էր որ
աղիս շապիկը գողացաւ:

—Ի՞նչ շապիկ, ի՞նչ էք ուզում, տիկին, հարց-
րեց զարմացած վարժուհին:

—Լսեցէք, օրիորդ. այդ տղան իմ հեռու-
ազգականն է (նա մատնացոյց արաւ Պետրո-
սին). զիանք խեղճ են. մի գիշեր մօտս պահե-
ցի, իսկ նա աղիս շապիկը գողացաւ:

—Չեմ հասկանում, տիկին, սա վաղուց այդ
շապիկով է գալիս դպրոց:

—Այն, վաղուց է... պահել էի աղիս համար
որ տօներին հազցնեմ. չէ՞ որ մենք էլ խեղճ
ենք. ախր, սա համբերելու բա՞ն է:

—Պետրոս, սրանցից շապիկ գողացար, հարց-
րեց վարժուհին:

—Ես չգողացայ... ես միայն հագայ, լսուեց
Պետրոսի դողացող ձայնը:

Երեխաները ծիծաղեցին:

—Նայեցէք այդ գետին մտածին, չի գողա-
ցել, միայն հագել է. այ դու անամօթ:

—Դէհ, տիկին, մի հայհոյէք, գնացէք տուն,
սա այսօր կըբերէ ձեր շապիկը:

Գեղջկուհին հայհոյելով և սպառնալով
դուրս եկաւ գասարանից:

Հէնց այդ միջոցին դպրոցի հոգաբարձու-
ներից մէկը եկաւ և վարժուհուն դիմելով ասաց.

—Օրիորդ Մարիամ, մենք լսել ենք որ ձեզ
մօտ անկարգութիւններ են տեղի ունեցել. այս-
տեղ մի մուրացկան տղայ է սովորում, որը գո-
ղութիւն էլ է անում։ Այդ կարող է վատ օրի-
նակ լինել միւսների համար, ուստի նրան ան-
միջապէս պէտք է հեռացնել։ Վարժուհին փոր-
ձեց համոզել հոգաբարձուին, որ աչքի ընկնող
տղայի ընդունակութեան համար ներողամիտ
վերաբերուի, բայց հոգաբարձուն լսել անգամ
չուզեց։

—Անպատճառ պէտք է արձակել. խայտա-
ռակութիւն է այդ և վատ օրինակ միւսներին։

Վարժուհին այլ ևս աւելորդ համարեց վի-
ճել և ստիպուած եղաւ համաձայնուել հոգա-
բարձութեան վճռի հետ։

Երեխաները հոգաբարձուի ներկայութեամբ

խմբովին միքանի ոտանաւորներ ասացին և զանազան պատմութիւններ կարդացին. հոգաբարձուն գոհ մնաց և դուրս գալիս նորից կրկնեց.


—Մուրացկանին պէտք է հեռացնել դըպըոցից:

Հոգաբարձուի գնալուց յետոյ վարժուհին սրտի դառը կսկիծով դիմեց Պետրոսին.

—Լսեցի՞ր, Պետրոս. դու ինձ խարում էիր, ստում, զողանում... Այլ ևս չգաս դպրոց, չի կարելի... հօ լսեցիր:

Երբ Պետրոսը դպրոցի բակի միջով անցնում էր, վարժուհին պատուհանից տեսաւ, թէ ինչպէս կախ էր զցել գլուխը և աչքերը սրբում էր թևով. օրիորդը սաստիկ խղճաց նրան, բայց ի՞նչ կարող էր անել:





¶

Այսպէս պատահեց, որ Ծննդից առաջ երկու օր իրար վրայ տօն եղաւ։ Վարժուհին և իւր բարեկամուհին—բժշկի օգնականը վճռեցին միասին այցելել երկու հեռաւոր գիւղեր՝ Լապուխինո և Բերեզովկա, որտեղից սարսափելի լուրեր էին հասնում։ Ասում էին, որ այստեղերի բնակիչները տանջւում են սովից և վարակիչ հիւանդութիւնից։ Երիտասարդ օրիորդները քաղաքում իրենց ծանօթներից միքամնի բաներ հաւաքելով գնացին կարօտեալ ժողովրդին օգնելու։

Նրանք առաւօտ վաղ գուրս եկան տանից և կէսօրից անց էր, երբ հասան Լապուխինո գիւղը։ Բոլոր խրճիթները ման եկան. ամենախեղձերին նպաստ բաժանեցին։ մէկին փող, միւսին շոր. բժշկի օգնականն էլ հիւանդներին նայեց, բժշկական խորհուրդներ տուեց. այսուհետեւ շարունակեցին իրենց ծանապարհը։ Նրանք արդէն դուրս էին եկել գիւղից, երբ արել մայր մտաւ։ Գետեղբեայ բուքը աւլում էր ձիւնապատ ճանապարհը։

Զիաները դանդաղ առաջ էին քայլում։

—Տեսէք, որտեղ են հասել այն խեղճերը,
յանկարծ բարձրաձայն ասաց կառապանը։

Կառքի մէջ նատողները իրենց երեսներից
յետ քաշելով քօղերը, նայեցին կառապանի ցոյց
տուած կողմը և տեսան երկու տղայ, որոնք
խրուելով ձիւնի կոյտերում՝ մեծ գժուարու-
թեամբ էին քայլում։

Կառքը բոլորովին մօտեցաւ երեխաներին,
որոնցից մէկը մօտ 12 տարեկան, իսկ միւսը
մօտ 6 տարեկան կրլինէր։ Նրանք կանգ առան
ճանապարհի ափին, սպասելով կառքի անցնե-
լուն և երկուսն էլ սկսեցին խորը զլուխ տալ
ճամբորդներին և ինչ-որ մրթմրթալ. Նրանք ո-
ղորմութիւն էին խնդրում։

Այդ երեխաները իրենց ցնցոտիներով ահա-
գին տրեխներով և զլիսարկի փոխարէն մի-մի
շոր գցած զիխներին՝ անտանելի ծանր տպաւո-
րութիւն էին թողնում։ Նրանց շրթունքները
կապտել և դողում էին. վէրքերով ծածկած ե-
րեխները ցրտից ուռել էին և համարեա մուգ գոյն
էին ստացել. չորացած ու սառած ձեռներին
մեծ մեծ տոպլակներ ունէին։

—Ո՞ւր էք գնում, երեխայք, հարցրեց վար-
ժուհին։

Երեխաները շփոթուած նայեցին օրիորդնե-
րին և չպատասխանեցին, կարծես չհասկացան
կամ չլսեցին ասածները։ Մեծ տղան ուզեց զը-
նալ, բայց էլ ոյժ չունէր և նորից կանգնեց։



Երկուան էլ սկսեցին խոքը զլուխ տալ ճամբորդ-
ներին եւ ինչոք մրթմրթալ:

Կառապանը բարձրածայն կրկնեց օրիորդի հարցը:

—Մենք Բերեզովկա գիւղիցն ենք, լսուեց տղայի երկչութ ձայնը:

Վարժուհին յանկարծ ցնցուեց. լաւ նայելով երեխաների դէմքերին բացականչեց.

—Պետքու Վարաբեան, այդ գու ես, թէ ես սխալում եմ:

Պատասխան չեղաւ: Բայց օրիորդն այլ ևս չէր կասկածում. այն, նա էր, իւր արձակած աշակերտը:

—Շուտով եկէք, նստէք կառքի մէջ, մենք ձեզ կրտանենք ձեզ գիւղը, շտափեցրեց օրիորդը:

Մեծ տղաս նստեց կառապանի կողքին, իսկ փոքրը—կառքի մէջ:

Օրիորդը այդ ծանր տպաւորութեան տակ՝ էլ ոչ մի հարց չկարողացաւ տալ:

Կառապանը առաջինը խօսեց իւր հարևանի հետ կիսայանդիմանական, կիսակարեկցող ձայնով.

—Իսչնւ ես այդ փոքրիկին էլ հետդ քաշ տալիս, չէ՞ որ դա կարող է ձեան հիւսի մէջ սառչել. դու կարող էիր և առանց նրան ման գալ:

—Նրան աւելի շատ են տալիս. նա չի սառչի, արդէն սովորել է, պատասխանեց տղան:

—Հա, ինչպէս կարելի է որ սառչի,—ծաղրեց կառապանը,—աղօթմիծ է, ինչ է, որ ցըտից չըստոչի:

Կառապանը շուտացրեց, մտրակով խփեց ձիա-

Ներին և նորից հարցրեց. — դուք ում տղան էք:
— Միունանի Յովհաննէս Վարաբեանի, պատասխանեց Պետրոսը:

— Այն զինուորի, որ պատերազմից վերադառն, ցնցուելով խօսեց կառապանը ձիերը կանգնեցնելով և ինքը ամբողջ մարմնով շուռ գալով դէպի տղան:

— Այն, հէնց նրա:

— Ախ, դուք թշուառ որբեր. ձեր հանգուցեալ հայրը նրան չարչարանք կրեց ուրիշի յանցանքի համար, դառնացած բացականչեց կառապանը և օրիորդներին դառնալով՝ կարեկցութեամբ ասաց.

— Սրանք որբեր են... Սրանց հայրը հերոս էր. ճապոնացոց հետ քաջութեամբ կուռել է. նա մի ոտք չունէր, վասառած էր կողքը, կարծեմ նաև զլուխը:

Զիաները շատ դանդաղ էին առաջ գնում, իսկ կառապանը չէր էլ մտածում նրանց քշել. որբերի ճակատագիրը կարծես յուղել, հոգսի մէջ էր գցել նոյն իսկ այդ կոպիտ մարզուն:

— Իսկ ձեր մայրը կենդան է:

— Այն, բայց հիմա շատ հիւանդ է, պակած տանջւում է. այդ պատճառով մենք ման ենք գալիս...

— Ինչու ձեր գիւղում չէք ման գալիս և այսքան հեռու էք եկել, հարցրեց օր. Հեղինէն:

— Մեզ մօտ բան չեն տալիս. իրենք էլ կարիքի մէջ են:

—Ո՞հ, մեր գիւղի տառապանքը մեզ մաշեց,
սարսափած գոչեց կառապանը և քշեց ձիերը:

Շուտով երևաց փոքրիկ գիւղը, որի ծայրին
գտնւում էր կիսով չափ հողը մտած և ձիւնով
ծածկած մի խրճիթ: Կառապանը ձիերը կանգ-
նացրեց ու ասաց.

—Ահա սա է Յովհաննէս Վարաբեանի խըր-
ճիթը:

Երբ մեր ճամբորդները կառքից իջան ու
խրճիթ մտան, նրանք մի տեսակ խեղզող օդ
զգացին:

—Այստեղ տիֆ պէտք է լինի, կամաց ա-
սաց օր. Հեղինէն իւր ընկերուհուն:

Խըրճի մի անկիւնում մահճակալի վրայ
պառկած էր հիւանդը, որի կողքի պատը ծած-
կած էր կոշտ վարագոյրով. գլխի տակ դրած էր
յարդով լցրած մի բարձ, փոքրիկ դէմքը նիհար
էր, չորացած ու բորբոքուած, երեսի մորթին
շագանակագոյն էր դառել: Հիւանդը շատ թոյլ
էր. աչքերը փակ, անշարժ պառկած, միայն
թոյլ հառաջանք էր լաւում: Խըրճում ցուրտ էր
և վառարանից ուգարի հոտ էր կանգնած: Վա-
ռարանը կաւէ ծաղկամանի նման մի բան
էր, որը շուռ տուած դրած էր սենեակի մէջ
տեղը և առաստաղի հետ միացած երկաթէ խո-
ղովակով: Այս տարօրինակ վառարանի մէջ ծը-
խում էին միքանի հատ տաշեղներ:

—Ինչո՞վ էր կերակրում ձեր մօրը, հարց-
րեց օր. Հեղինէն երեխաներին:

— Նա բան չի ուտում, միայն ջուր է խը-
մում, պատասխանեց աղջիկը:

— Առաջ ուտում էր. երբեմն նրան բուլկի
էի բերում, գոլ ջրում թրջում էի և այնպէս
կերակրում, իսկ հիմա էլ չի ուտում, այսպէս
պառկած է մեռելի նման, խօսեց Պետրոսը:

Վարժուհին ակամայ յիշեց դասարանում
կորած բուլկի մասին և աչքերը արտասուզով
լցուեցին:

— Իսկ դուք ի՞նչ էք ուտում, հարցրեց նա
երեխաներին:

— Ինչ որ հաւաքում ենք, այն էլ ուտում
ենք, պատասխանեց Պետրոսը:

յետոյ նա փոքր եղբօրից առաւ տոպրակը
և քրոջը տուեց: Փոքրիկ տանտիկինը, որ իւր եղ-
բայրների նման նիհար ու գունատ արարած
էր, սկսեց տոպրակի միջի եղածը դատարկել:

— Ֆեղիկին աւելի են տալիս, խօսեց աղ-
ջիկը, նրան խղճում են: Իսկ Պետրոսին երբեմն
ոչինչ չեն տալիս: Ամենքն էլ կարիքի մէջ են:

Օր. Հեղինէն հիւանդի մօտ կանգնած քըն-
նում էր նրան, բազկերակի զարկը համարում,
սրտի բաղխումը լսում: Իսկ օր. Մարիամը
տխուր նայում էր երեխաներին: Նա մտածում
էր թէ թշուառ տղան օրական ինչ կարող է հա-
ւաքել սով եղած տեղերում: Պետրոսը իւր փոք-
րիկ եղբօր հետ, մարմինը հաղիւ ծածկող ցնցո-
տիներով, երկու-երեք գիւղ էր անցել, այն
դժուար ձիւնապատ ճանապարհներով և պատու-

հանների առաջ կանգնելով, ողորմութիւն աղերսել:

Ֆեղիկի տոպրակի մէջ գտնուեց միքանի հատ չորացած հացի կտորներ, սոխ, միքանի հատ եփած գետնախնձոր և երկու փոքր կտոր մսեղին: Այս էր բոլորը: Դժուար թէ սրանով կշտանար ամբողջ ընտանիքը:

Միսը տեսնելով աղջիկը ուրախ վրայ ընկառ:
—Մի կտոր ինձ տուր, խնդրեց Ֆեղիկը:
—Ոչ, ոչ, այս մայրիկի համար պահենք,
զուցէ նա ուտէ:

Տղան խոնարհութեամբ ձեռքը յետ քաշեց: Նրա դէմքը նիհար էր, մեծ ու սիրուն աշխիներով, որոնց շնորհիւ բոլորի համակրանք էր վայելում: Այդ պատճառով Ֆեղիկին երբեմն տալիս էին սոխ կամ գետնախնձոր, երբեմն էլ մսեղին. այդպիսի դէպքում նրանք շատ գոհ էին մնում:

Օր. Հեղինէի անհանգստացնելը հիւանդին դարթեցրեց, որը հառաջելով շշնջաց.

—Ո՞հ, տաժանելի է, օրիորդ... բժշկուհի:
Երեխաները մօտ վազեցին. Ֆեղիկը յենուեց բարձին, իսկ Պետրոսը նրա դէմքը շոյեց ու հարցրեց.

—Մայրիկ, բան չե՞ս ուտելու:
—Ո՞չ, ինքներդ կերէք:
—Մենք կերանք, միսը քեզ համար թողինք:
Հիւանդը պլուխը շարժեց և իւր սարսափե-

լի ու աղերսալից հայեացքը ձգեց անծանօթ օրիորդների վրայ:

—Սիրելի օրիորդներ... Ա՛խ, երեխաներս... ես ոչինչ... նրանք զեռ փոքր են, անփորձ, ոչոք չունին... որբ կրմնան:

Օրիորդները միմեանց նայեցին և այդ հայեացքներով իրար մտքերը հասկացան. այն, նրանք ինչ-որ խոստացան միմեանց և երկուսն էլ միասին ասացին.

—Նանի, հանգիստ եղիր, մենք երեխաներիդ անխնամ չենք թողնի, հոգս կըքաշենք, կօգնենք... Մի բան կամնենք:

—Շնորհակալ եմ, սիրելիք, շնորհակալ եմ: Սրանք լաւ երեխաներ են. Պետրոսը հոգացող է, մեզ խղճում է: Նա շատ է սիրում ուսում, բայց քիչ առաջ դպրոցից արձակեցին... Ո՞հ, ինչպէս էր կոծում խղճուկս, կարծում էի, թէ էլ չի ապրի...

—Ոչինչ, նանի, ոչինչ, հանգստացիր, Պետրոսը դարձեալ կրտովորէ:

Պետրոսը յանկարծ վերակենդանացաւ, սկըսեց շիոթուել և թէպէտ խրճթում աղօտ լոյս էր սփուռած, բայց և այնպէս նրա հիւանդուտ տխուր դէմքի վրայ ուրախ ժպիտի նման մի բան նկատուեց:

Բժշկուհին դեղեր յանձնեց աղջկան և սովորեցրեց թէ ինչպէս պիտի տայ հիւանդին: Նոյն միջոցին վարժուհին ցածրածայն խօսում էր Պետրոսի հետ: Օրիորդը կարծես բոլորովին

ուրիշ տղայ էր տեսնում իւր առաջ՝ խելացի, ուշիմ, թշուառ ընտանիքի մի հոգատար անձնաւութիւն։ Նա չէր կարողանում ճանաչել իւր նախկին դաժան ու կրպիտ աշակերտին, որը կամ բոլորովին լուռ էր կամ խօսում էր ակամայ և ընդմիջումներով։ Այդ փոքրիկ գիւղացու հանգիստ ու խելացի պատասխանները, նրա ամեն մի խօսքը ինչ-որ լուրջ ու սրտագին բան էր արտայայտում։ Նա իւր փոքր հասակում այնքան ցաւ էր կրել, այնքան ոյժից վեր կոփւ մղել կեանքի հետ, որ ուրիշները գուցէ իրենց ամբողջ կեանքում կրած չլինեն։

— Առաջ մենք էլ լաւ էինք ապրում, — պատմում էր տղան իւր նախկին վարժուհուն, — ոչ խար, ձի ու կով էինք պահում։ Հայրս կարողանում էր աշխատել ես էլ օգնում էի։ Մենք հողաբաժին էլ ունէինք, գործներս էլ լաւ էր գընում։ Բայց երբ հօրս պատերազմ տարան, ամեն բան տակին ու վրայ եղաւ... Հողն ուրիշին տուինք, տաւարը ծախսեցինք... Հայրս վերադարձաւ, բայց միայն մի ոտով, վսասուած կրծքով և շարունակ հազում էր։ Նա մի տեղ ծառայ վարձուեց ամիսը 2 ր. 25 կ.։ Ոչինչ, այդ էլ լաւ կըլինէր, բայց նա չկարողացաւ դիմանալ. հիւանդութիւնը խանգարում էր, կորցրած ոտի համար էլ շատ էր մտածում։ Նա մեղ բոլորիս խնամում էր, ինձ էլ խրատում էր սրանց խնամել։ Երբէք մեզ թոյլ չէր տալիս մուրալու... Երբ հայրս վախճանուեց, թաղման կարգը կատարե-

րելու համար մեր բոլոր շորերը ծախեցինք, դեռ
պարտք էլ վերցրինք։ Ահա սովու էլ վրայ հասաւ
և մենք բոլորովին աղքատացանք։ Ինձ թւում է
որ մայրս այլ ևս չի աղատուի իւր անկողնից։
Բժիշկը նայեց, ձեռքը թափ տուեց և նոյն իսկ
դեղ չգրեց։

Վերջին խօսքերը տղան դառնութեամբ ար-
տասանեց, յետոյ լոեց ու զլուխը կախ գցեց։

— Խեղճ քոյրիկս էլ տանջւում է աչքերից,
— նորից խօսեց Պետրոսը. — առաջ դպրոց էր զը-
նում, խակ հիմա կուրանում է։

— Խսկ զու առաջ սովորում էիր։

— Ես չէի սովորում. ժամանակ չունէի,
տան գործով էի զբաղուած։ Քոյրս մեծ սէր ու-
նէր սովորելու. մինչև անգամ ուսուցիչը երկու
անգամ ուղարկել էր հարցնելու, թէ ինչո՞ւ Դա-
րիան չի յաճախում դպրոց։ Բայց նա չի կարող,
աչքերը ցաւում են, բացի դրանից մայրս էլ
նայող չունի։

— Քեզ ով ուղարկեց մեզ մօտ, ուսումնա-
րան, հարցրեց վարժուհին։

— Ոչոք... լսել էի, որ ձեզ մօտ շատ լաւ
են սովորեցնում ու եկայ։ Մտածում էի
թէ...։

Պետրոսը յանկարծ ցնցուեց ու լոեց. էլ չը-
վերջացրեց իւր խօսքը։ Յայտնի չեղաւ թէ ին-
չի մասին էր մտածում։

Վարժուհին հառաչեց։ Նա իւր հոգու ներ-
սը զգաց խուլ նախատինք գէպի իրեն և մտա-

ծեց՝ որ մարդուս կեանքը յաճախ հանելուկ է։
Ճրագում մոմը աղօտ լոյս էր արձակում իւր
շուրջը։ Մենածայն միավերպ լաւում էր զառը
ճշմարտութեամբ լի մանկական պատմութիւնը։
Երբեմն լսելի էր հիւանդ կնոջ խուլ հառաջան-
քը, որի ծանր զառանցանքը օրիորդին հանում
էր աւելի և ծանր իրականութիւնից։

Բժշկի օգնականը հիւանդի պլավերել
կանգնած՝ մատնացոյց արաւ իւր ընկերուհուն
փոքրիկ թեղիկին, որը տարօրինակ ծոել էր զու-
խը մօր բարձին, ձեռները լայն բացած՝ փէտացած
կանգնել էր. բերանը բաց, աչքերը կիսախուփ,
կարծես նա ուշաթափ դրութեան մէջ լինէր։

—Ի՞նչ է եղել նրան, վախեցած հարցրեց
վարժուհին։

—Նա կանգնած քնել է, — հանգիստ պատաս-
խանեց մեծ եղբայրը, — այդպէս սովորութիւն ու-
նի, հէնց որ տուն կըմտնի, կանգնած կամ նստած,
իսկոյն կընի։ Կարծես քարանում է, բան էլ չի
ուտում։ Խեղճը շատ մըսեց։ Զէ որ մեղ տուն
չեն թողնում, կանգնում ենք պատուհանների
առաջ, ոմանք տալիս են որևէ բան, ոմանք ար-
տաքսում տանց բան տալու։

Պետրոսը կամաց մօտեցաւ փոքրիկ եղբօ-
րը, զգուշութեամբ ձեռիցը բռնեց ու «Եկ, մա-
տաղ, Եկ, սիրելիս», քաղցր խօսքերով մի անկիւն
տարաւ ու պառկեցրեց ինչ-որ փալասների վը-
րայ։ Եւ նրքան քնքութիւնն, նրքան հայրական
հոգացողութիւնն կար այդ ըոսէին այդ կոպիտ



Բերանը բաց, աչքերը կիսախոսի, կարծես նա ու-
շախտափ դրութեան մէջ լինէր:

ու տիսրադէմ տղայի դէմքին, մինչդեռ ինքը
հազիւ էր դուրս եկել մանկական հասակից:

Չնայած որ օրը երեկոյացել էր, վարժու-
հին և բժշկուհին պէտք է շարունակէին իրենց
ճանապարհը: Նրանք փող տուին երեխաներին,
հիւանդի համար էլ գեղ տուին, իսկ Պետրոսին հը-
րամայեցին այլ ևս չգնալողորմութիւն ինդրելու:

—Մի վշտանար, Պետրոս,—մտերմաբար տ-
սաց վարժուհին,—մայրիկիդ և քոյրիկիդ լաւ-
պահիր. քեզ խօսք եմ տալիս, որ անպատճառ
ուսումդ շարունակես:

—Ել ի՞նչ ուսում, կասկածով պատասխա-
նեց տղան, մինչդեռ նրա դէմքը կասկարմիր
կտրուեց....

Փոթորիկը հանդարտուել էր. ձիւնը ծած-
կել էր հարթ դաշտերը, օրիորդները տիսուր
մտածմունքների մէջ խորասուզուած գնում
էին կառքով: Ծանը իրականութիւնը շղթայել
ու տիրել էր նրանց ուշըն ու միտքը, նրանց
բոլոր զգացմունքը:

—Այս, կեանքը մի բարդ ինդիր է... ինչպի-
սի ողբերգութիւն է կատարւում մեր թողած
խրճիւմ:

—Եւ ցաւօք սրտի զգում եմ, որ դրա յանցան-
քը ինձ վրայ էլ է ընկնում, ասաց վարժուհին:

—Յանցանքը միշտ կարելի է քաւել, պա-
տասխանեց բժշկուհին սեղմելով ընկերունու
ձեռքը:



Ե

Միւս օրը, մեծ դասամիջոցին, երբ աշակերտները նստեցին նախաճաշելու, վարժուհին ներս մտաւ և սեղանի մօտ նստելով խօսեց.

—Երեխայք, ես այսօրուայ համար ձեզ խոստացել էի մի բան կարդալ. բայց աւելի լաւ է մի եղելութիւն պատմեմ, որը երէկ ինձ հետ պատահեց:

—Պատմեցէք, պատմեցէք, այդ շատ հետաքրքրական է, լսուեց ամեն կողմից։ յետին նստարաններից եկան նստեցին առաջին նստարանների վրայ. բոլորն էլ իրենց ժիր ու հարցական հայեցքները ուղղեցին դէպի օրիորդը։

Երեխանները շատ էին սիրում, երբ վարժուհին նրանց համար բան էր կարդում. իսկ աւելի ևս սիրում էին, երբ նա բերանացի էր պատմում։

Օրիորդը պատմում էր հանգիստ ու մտերմաբար, յաճախ կանգ էր առնում իւր յուղ-

մունքը ծածկելու։ Նա պատմում էր երեխաներին առաջին օրուայ իւր ճամբորդութիւնից, Բերեզովկա գիւղում իւր տեսածն ու լսածը, Պետրոս Վարարեանի բարի վարմունքը, նրա չարքաշ կեանքը. իսկ երբ հասաւ իւր պատմութեան այն կէտին, թէ ինչպէս քնեց փոքրիկ ֆեղիկը, նա յանկարծ լոեց, յետոյ կարծես սթափուելով ասաց.

— Այնպէս ծանր էր նրա վրայ նայելը... Փոքրիկ նիհար... Այնքան սիրելի ու հեղիկ գէմքը... Կարծես քարացել էր... Սարսափելի է... Ո՛չ, երեխայք, այլ ևս չեմ կարող...

Օր. Մարիամը լոեց և երեսը ծածկեց ձեռներով։

Երեխաների շառելու լառեց, յետոյ մի խուլ հեկեկանք, նրան հետեւեց երկրորդը, երրորդը...

Տէր Աստուած, եթէ իմանամ, որտեղ եմ վայր ընկնելու, յարդ կրփուի։ Իմանայի որտեղ է խկական գժրախտութիւնը՝ հոգիս հանեի տայի, գուան մօտից լառեց գալրոցի ծառայի կոպիտ ձայնը։

Նրա խօսքերը ամենքին սթափեցրեց. այդ ըսպէին կարծես այդ էր բոլորի միաքը։

Օրիորդը բարձրացրեց գլուխը. նրա աչքերը արտասուելուց կարմըել էին։

— Երեխայք, թնդ մենք չամաչենք մեր արցունքից. թնդ սրանք մեր յանցանքը քաւելու արցունքները լինեն։ Այն, մենք շատ անարդար էինք գէպի Պետրոսը։

Մենք հարց ու փորձ չարինք նրա դառը վիճակի, նրա գժրախտ կեանքի մասին... Իսկ այն թշուառը ինչպէս էր ձգտում սովորել, ինչպէս էր աշխատում. տամնեալ վերստ էր անցնում խեղճուկը ցրտին ու սառնամանիքին, այն էլ քաղցած փորով։ Նա խնամում էր մօրը, քրոջը, փոքրիկ եղբօրը։ Յայտնի բան է, նա լաւ չարաւ, որ Սիմէօնի բուլկին վերցրեց, Օնիկի տետրակը, իւր ազգականի տանից շապիկը. սակայն մենք այս բոլորը պէտք է ներենք, որովհետև նա անասելի վիշտ է ունեցել:

—Ես իսկի չեմ ափառում իմ բուլկիի համար, ճշաց Սիմէօնի սուր ձայնը։

—Ես նրան դարձեալ կրտամ տետրակ, խօսեց Օնիկը։

—Իսկ ես նրան պատկերազարդ գրքոյկ կընծայեմ ֆեղիկի համար, լսուեց նոյն իսկ ժլատ Անդրէասեանի ձայնը։

Ամենքն էլ որևէ բանով ուզում էին արտայայտել իրենց մասնակցութիւնը Պետրոսին օգնելու։

Երբ աշակերտները տուն էին գնում, Անտօնը յետ մնաց, շփոթուած մօտեցաւ վարժուհուն և երեք կոպէկանոց տալով ասաց.

—Օրիորդ, սրանով բուլկի առեք Պետրոսի մօր համար։

—Լաւ, սիրելիս, հէնց վաղը կուղարկեմ։

Միքանի օրից յետոյ մեր Պետրոսը տեղափոխուեց Զառւսեան դպրոցի խոհանոցը։ Նրա մայրը վախճանուեց, փոքրիկ եղբօրը իւր մօտ վերցրեց դպրոցի հոգաբարձուն, որի կինը սիրով յանձն առաւ աղջկայ աչքերը առողջացնել և նրան ուսում տալ։

Օր. Մարիամի հոգն ու թախանձանքը արձականք զտան այն մարդկանց սրտերում, որոնց նա թախանձանօք օգնութիւն էր խընդրում Պետրոս Վարաբեանի ընտանիքի համար։

Երբ Պետրոսը տխուր և յուղուած նորից երևաց դասարանում, բոլոր աշակերտները միանգամբ լռեցին, հանաքներն ու խօսակցութիւնները դադարեցրին... Իսկ երբ ցանկարծ Պապովեանի ծիծառն եկաւ, այնպիսի մի բուց ստացաւ հարևանից, որ խսկոյն ձայնը կըտրեց։

—Այդ ծաղրածութիւններդ թնդ, թէ չէ՞ ես քեզ ցոյց կըտամ, խստութեամբ շշնջաց Անտօնիը։

Պետրոս Վարաբեանը մօտիկ բարեկամացաւ դպրոցի ծառայի հետ։ Դա ամենամտերիմ ու անխղելի բարեկամութիւն էր։

Քէորգը իւր շապիկը փոքրացրեց ու կարեց Պետրոսի համար. ոչ մի պատառ առանց նրան բերանը չէր դնում։ Պետրոսն էլ իւր կողմից

միշտ օգնում էր նրան՝ թէ ջուրը բերելիս, թէ
փայտ ջարդելիս և թէ դասարանները մաքրելիս։
Իսկ երեկոները կամ կարդում էր նրա համար,
կամ նստում զրոյց էին անում իրենց հետա-
քրքրող հարցերի մասին։

— Քեռի Փէորդ, մի անգամ ասաց Պետրո-
սը, ես այն շապիկը հօ չգողացայ, միայն վերց-
րի հագնելու. օրիորդը ամեն օր բարկանում էր
վրաս, որ իմս կեղտոտ էր և կարկատանով, ես
էլ ուրիշը հագայ...»

— Երբեմն այդպէս զուր մեղադրում են...
ես էլ դանակս որ կորցրի, մտածում էի թէ զու
կըլինես վերցրած, բայց, վերջը գտայ. կընշա-
նակէ՝ ես քեզ ի զուր վիրաւորեցի։

— Այն, մեր ընտանիքում այդպիսի խայտա-
ռակութիւն չէր կարող պատահել. հայրս սաս-
տիկ արգելում էր։


— Իսկ Սիմէօնի բուլկին դժւ վերցրեր։


— Ոչ, չեմ վերցրել, չեմ էլ տեսել։

Իսկապէս Պետրոսը երբէք բան չէր գողա-
ցել ոչոքից։ Դա մի աղնիւ, բարի ու անշահա-
սէր տղայ էր։

Երբ գարնանը Զառւսեան գլուցում քըն-
նութիւնները վերջացան, Պետրոս Վարարեանը
ոչ միայն գովասանական թուղթ, այլ և մի փա-
ռակազմ գիրք նուէր ստացաւ։ Գովասանական
թուղթը յանձնեց նրան վաճառական-հոգաբար-

Ճուն և շատ գովեց նրան իւր յառաջադիմութեան և զերազանց վարքի համար։ Պետրոսը շնորհակալութեամբ լի հայեացքով նայեց օր. Մարիամին, որ պիտով հաւանութեան նշան արաւ և սիրալիր ժպտաց։ Նրանք իրար հասկացան։






ԱՐԴՅՈՒՆ ՄԱՐԿՈՎԻԿԱՆԵՐԻ ԲՈՒ

1.	Ապյուի կարապներ (սպառուած)	8
2.	Աստին միշտ (սպառուած)	10
3.	Անասապարու (սպառուած)	12
4.	Աշխէնն ու Մարգարիտ (սպառ.	10
5.	Աղքանափառ բաղդար (սպառուած)	5
6.	Գոհարիկն ու Առաղիկը (սպառուած)	10
7.	Նելլօնն ու պատրաշը (սպառ.)	10
8.	Գիլդում (սպառուած)	20
9.	Կենդանիք և արդեօք (սպառուած)	8
10.	Բարեկամներ (սպառուած)	12
11.	Առակներ ընտկան պատճեթինից (սպառ.)	12
12.	Մազնիս	12
13.	Առջի պատճեթինից	15
14.	Ռզնիներ	8
15.	Թմիվիկը (սպառուած)	12
16.	Լեռան աղջիկը (սպառուած)	20
17.	Բու	12
18.	Փոքրիկ զալոյը արկածները	15
19.	Փիղ	8
20.	Ռուրէնի զբաղմները	25
21.	Որը Աննան	12
22.	Հրցունք	15
23.	Ակձագոհ մանուկ	10
24.	Դարեւոք կաղնի	6

25.	Խըստմասի եզնըքին	10
26.	Լուսասատիկներ	40
27.	Կատակեղզութին զոմի բակում	12
28.	Նոր մայրիկս	10
29.	Բախուր ինչումն էր	8
30.	Եօլին և Եալին	5
31.	Փոքրիկ Լեպնի զաղանիքը	7
32.	Կարլ Լիլին	20
33.	Յիսոսի տօնածառը									
	Մարգարածաղիկն ու արտառը	10
34.	Փոքրիկ Հարրիփ պարակցու	15
35.	Արայշաղատըն ու Խօզուը	10
36.	Գեղեցիկ Նիսելնեզա	10
37.	Աստղամանուկ	10
38.	Զանինգների բնտանիքը	30
39.	Առաջին հիսաթափութին	5
40.	Աղքատ դպրոցականը	10

— Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ո Ւ Թ Ո Ւ Թ —



Jan. 503

